ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«3»դեկտեմբերի 2015թ. N 806-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի N 63 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի N 399 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Պետական կառավարչական հիմնարկների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 11-րդ, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածներին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 16-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը, գույքի կազմը և չափը հաստատելու մասին» N 63 որոշման մեջ կատարել հետևյալ ռացումները և փոփոխությունը՝

1) որոշման N 1 հավելվածում՝

ա. 7-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր «ժբ» և «ժգ» ենթակետերով.

«ժբ) պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի կառավարման և անվտանգ օգտագործման ապահովումը.

ժգ) ջրային համակարգերի կառավարման քաղաքականության մշակման և իրականացման ապահովումը:»,

բ. 8-րդկետը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր «թ[1]»և «թ[2]» ենթակետերով.

«թ[1]) ջրային համակարգերի շահագործման հայեցակարգերի, ծրագրերի մշակում և իրականացման մոնիթորինգ.

թ[2]) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքով նախատեսված գետերի ջրերի վնասակար ներգործության կանխման և վերացման միջոցառումների մշակում և իրականացման մոնիթորինգ.».

2) որոշման N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2.Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 16-ի «Ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի բնագավառում

պետական վերահսկողություն իրականացնող մարմինները և դրանց գործառույթները սահմանելու մասին» N 399 որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1.Սահմանել, որ ջրային ռեսուրսների պահպանության բնագավառում պետական վերահսկողությունն իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությունը, իսկ ջրային համակարգերի պահպանության բնագավառում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը:»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված
ԼեռնայինՂարաբաղի
Հանրապետությանկառավարության
2015 թվականի դեկտեմբերի 3-ի
N 806-Ն որոշման

«Հավելված N2
ԼեռնայինՂարաբաղի
Հանրապետությանկառավարության
2004 թվականի մարտի 16-ի
N 63 որոշման

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

I. Կառուցվածքային ստորաբաժանումներ

1. Վարչություններ

1) Անասնաբուծության և անասնաբուժության վարչություն

2. Բաժիններ

1) Գյուղատնտեսության ծրագրավորման, մարքեթինգի և ագրովերամշակման բաժին
2) Ջրային տնտեսության և ինժեներական մելիորացիայի բաժին
3) Ֆինանսաբյուջետային բաժին
4) Հաշվապահական հաշվառման բաժին
5) Բուսաբուծության և բույսերի պաշտպանության բաժին
6) Իրավաբանական բաժին
7) Տեղեկատվության, հասարակայնության հետ կապերի և համակարգչային սպասարկման բաժին
8) Ընդհանուր բաժին

II. Առանձնացված ստորաբաժանումներ

1) Գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչություն
2) Ջրային համակարգերի օգտագործման և պահպանության պետական տեսչություն»:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ